

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«-----» ----- 2021 թվական N -----Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2001 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N 935 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության գիտական կազմակերպություններում գիտական կադրերի որակավորման կարգը և գնահատման չափանիշները հաստատելու մասին» N 935 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշմամբ հաստատված կարգի՝

ա. 4-րդ կետում «յուրաքանչյուր» բառը փոխարինել «առնվազն» բառով,

բ. 11-րդ կետում «2» թիվը փոխարինել «3» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N 935 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հոկտեմբերի 3-ի N 935 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի (այսուհետ՝ նախագիծ) ընդունումը բխում է ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 747-Լ որոշումից՝ համաձայն որի սկսած 2022 թվականի հունվարի 1-ից ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրերում ընդգրկված գիտական կադրերի աշխատավարձն աստիճանական կավելանա՝ հասնելով հանրապետության մասշտաբով պետական համակարգում համեմատելի և համադրելի արժեքների: Հաշվի առնելով, որ համապատասխան կարգավորումը նախատեսված է այն գիտական կազմակերպությունների համար, որոնք գիտական կադրերի որակավորումն իրականացրել են սահմանված ամսաթվից առավելագույնը մեկ տարի առաջ՝ նախագծով առաջարկվում է ՀՀ կառավարության 2001 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության գիտական կազմակերպություններում գիտական կադրերի որակավորման կարգը և գնահատման չափանիշները հաստատելու մասին» N 935 որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետում գիտական կադրերի որակավորման անցկացման ժամկետը «յուրաքանչյուր 5 տարին մեկ անգամ»-ի փոխարեն սահմանել «առնվազն 5 տարին մեկ անգամ», որի արդյունքում գիտական կազմակերպությունները կարող են իրականացնել գիտական անձնակազմի կամավոր արտահերթ ատեստավորում, ինչն էլ հնարավորություն կտա արտահերթ ատեստավորում անցած գիտական կադրերին վարձատրվելու ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի N 747-Լ որոշմամբ սահմանված բազային նվազագույն աշխատավարձի համապատասխան դրույքաչափերով: Նշված փոփոխությունը բխում է նաև «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասից, որտեղ նշվում է, որ գիտական կազմակերպություններում գիտական աշխատողի ատեստավորումն իրականացվում է **առնվազն** հինգ տարին մեկ անգամ:

Հաջորդ փոփոխությունը վերաբերում է կարգի 11-րդ կետին, որտեղ առաջարկվում է «2» թիվը փոխարինել «3» թվով, քանի որ գիտական կադրերի որակավորման գնահատման չափանիշների մասին նշվում է 3-րդ կետում, իսկ 2-րդ կետով ներկայացված է կազմակերպություններում գիտական կադրերի որակավորման տարակարգը:

Առաջարկվող կարգավորման բնույթը

Առաջարկվում է ՀՀ կառավարության 2001 թվականի հոկտեմբերի 3-ի N 935 որոշման մեջ կատարել փոփոխություններ, որոնք ուղղակիորեն բխում են ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 747-Լ որոշումից:

2. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները, անձինք և նրանց դիրքորոշումը

Նախագիծը մշակվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի կողմից:

3. Ակնկալվող արդյունքը

Նախագծով առաջարկվող փոփոխությունների արդյունքում կսահմանվեն գիտական արդյունքի միջազգային մակարդակի պահանջներ: Նշված կարգավորումները կնպաստեն գիտության ոլորտը երիտասարդ կադրերով համալրելու խնդրի լուծմանը, գիտական կադրերի սոցիալ-տնտեսական և աշխատանքային պայմանների բարելավմանը, գիտության և տեխնիկայի բնագավառի բարձր որակավորում ունեցող կադրերի թվաքանակի կայուն աճին և գիտական ներուժի արդյունավետ նպատակային վերարտադրության ապահովմանը:

ՏԵՂԵԿԱՆՔ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2001 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N 935 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ**

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հոկտեմբերի 3-ի N 935 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունմամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ՏԵՂԵԿԱՆՔ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2001 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N 935 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ
ԲՅՈՒՋԵՆԵՐՈՒՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ
ՆՎԱՋԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հոկտեմբերի 3-ի N 935 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ ՀՀ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում եկամուտների և ծախսերի ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2001 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N 935 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

1. ՀՀ արդարադատության նախարարություն	04-06-2021 թվականի
	N /27.3/15154-2021 գրություն
<p>1.«Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հոկտեմբերի 3-ի N 935 որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) նախաբանից առաջարկում ենք հանել ««Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի «ը» կետով և» բառերը՝ նկատի ունենալով, որ դրա անհրաժեշտությունը բացակայում է:</p> <p>2. Նախագծի 1-ին կետի 1-ին ենթակետի «ավելացնել» բառն անհրաժեշտ է փոխարինել «լրացնել» բառով:</p> <p>3. Նախագծի 1-ին կետի 2-րդ ենթակետի ա) պարբերությամբ կատարվող լրացումների՝ «ավագ լաբորանտ կամ ավագ ճարտարագետ» և «լաբորանտ կամ ճարտարագետ» պաշտոնների առնչությամբ անհրաժեշտ ենք համարում հայտնել, որ Հայաստանի</p>	<p>Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:</p> <p>Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:</p> <p>Ընդունվել է: Նախագծից հանվել է «ավագ լաբորանտ կամ ավագ ճարտարագետ» և «լաբորանտ կամ ճարտարագետ»</p>

Հանրապետության կառավարության 2001 թվականի հոկտեմբերի 3-ի N 935 որոշման (այսուհետ՝ Որոշում) վերնագիրն է՝ Հայաստանի Հանրապետության գիտական կազմակերպություններում գիտական կադրերի որակավորման կարգը և գնահատման չափանիշները:

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գիտական կադրերի պատրաստման հիմնական ձևերն են՝ ասպիրանտուրա, օրդինատուրա, դոկտորանտուրա և հայցողների համակարգ:

Տվյալ դեպքում նախատեսվում է Որոշման մեջ լրացնել լաբորանտի կամ ճարտարագետի պաշտոնը, որի համար բավարար է գիտական կազմակերպության գիտական ուղղություններին համապատասխան մասնագիտության առնվազն բակալավրիատի 3-րդ կուրսի ուսանող լինելը: Գտնում ենք, որ լաբորանտի կամ ճարտարագետի համար՝ Նախագծով նախատեսվող չափանիշները չեն բավարարում գիտական կադրին ներկայացվող պահանջներին, ուստի կարծում ենք՝ գիտական կադրերի որակավորման կարգը չի կարող տարածվել վերջիններիս վրա:

Նշվածը հաշվի առնելով՝ անհրաժեշտ է Նախագծով նախատեսված կարգավորումները վերանայել:

պաշտոնների տարակարգումն ու որակավորման համար անհրաժեշտ չափանիշները:

4. Նախագծի 1-ին կետի 2-րդ ենթակետի բ) պարբերությամբ կատարվող փոփոխության արդյունքում՝ գիտական կադրերի որակավորումն անցկացվում է առնվազն 5 տարին մեկ անգամ:

Համաձայն Նախագծի հիմնավորման՝ նշված փոփոխությունը բխում է Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասից, համաձայն որի՝ գիտական կազմակերպությունում գիտական աշխատողի ատեստավորումն իրականացվում է առնվազն հինգ տարին մեկ անգամ: Ատեստավորումը նպատակ ունի՝

ա) գնահատել գիտական աշխատողի մասնագիտական պատրաստվածության աստիճանը և նրա կողմից ստացված գիտական արդյունքները.

բ) պարզել գիտական աշխատողի մասնագիտական որակի համապատասխանությունը նրա զբաղեցրած պաշտոնին:

«Կրթության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետի համաձայն՝ **ատեստավորումը՝** ուսումնական հաստատության գործունեության և նրա շրջանավարտների պատրաստման որակի, բովանդակության և մակարդակի գնահատումն է՝ պետական կրթական չափորոշիչների պահանջներին համապատասխան: Նույն մասի 18-րդ կետի համաձայն՝ **որակավորումը՝** ամփոփիչ ատեստավորման արդյունքում մասնագիտական որակավորման

Չի ընդունվել:

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի 17-րդ՝ «Գիտական կազմակերպությունում գիտական աշխատողի ատեստավորումը» հոդվածում գիտական կադրերի «որակավորման» և «ատեստավորման» հասկացությունների միաժամանակյա օգտագործումը տարընթերցման տեղիք է տալիս, որն արդեն կարգավորվել է «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագծով: Սակայն անհրաժեշտ է հաշվի առնել, որ սույն հոդվածի 3-րդ կետը սահմանում է, որ կառավարությունը հաստատում է գիտական կադրերի որակավորման կարգը և գնահատման չափանիշները:

բնութագրին անձի համապատասխանությունը հավաստող կարգավիճակ է, որը շնորհվում է համապատասխան փաստաթղթով: Նկատի ունենալով, որ Օրենքով նախատեսված կարգավորումը վերաբերում է ատեստավորմանը, իսկ Նախագծով՝ որակավորմանը, մինչդեռ դրանք տարբեր հասկացություններ են, գտնում ենք, որ Նախագիծն անհրաժեշտ է վերանայել:

5. Նախագծի 1-ին կետի 2-րդ ենթակետի գ. պարբերությամբ լրացվող ԱՎԱԳ ԼԱԲՈՐԱՆՏ ԿԱՄ ԱՎԱԳ ՃԱՐՏԱՐԱԳԵՏ պարբերությամբ նախատեսվում է, որ ավագ լաբորանտի կամ ավագ ճարտարագետի պաշտոն կարող են զբաղեցնել տվյալ գիտական կազմակերպության գիտական ստորաբաժանման այն աշխատակիցները, որոնք՝ ունեն տվյալ գիտական կազմակերպության գիտական ուղղություններին համապատասխան մասնագիտությամբ առնվազն բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի դիպլոմ և առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ:

Այս կապակցությամբ անհրաժեշտ է նկատի ունենալ Որոշմամբ հաստատված կարգի «ԿՐՏՍԵՐ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂ» պարբերությունը, որով սահմանված է, որ կրտսեր գիտական աշխատողի պաշտոնը կարող են զբաղեցնել՝ մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող մասնագետները:

Ընդունվել է:

Նախագծից հանվել է «ավագ լաբորանտ կամ ավագ ճարտարագետ» և «լաբորանտ կամ ճարտարագետ» պաշտոնների տարակարգումն ու որակավորման համար անհրաժեշտ չափանիշները:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի N 747-Լ որոշման հավելվածով սահմանված է գիտական կադրերի նվազագույն պաշտոնային դրույքաչափի հաշվարկման գործակիցները, որոնց ուսումնասիրությունից կարելի է ենթադրել, որ ավագ լաբորանտի կամ ավագ ճարտարագետի պաշտոնին ներկայացվող պահանջները չպետք է լինեն ավելին, քան կրտսեր գիտական աշխատողի պաշտոնին ներկայացվող պահանջները, մինչդեռ ներկայացված Նախագծով դիպլոմավորված մասնագետի որակավորումից բացի ավագ լաբորանտի կամ ավագ ճարտարագետի պաշտոն զբաղեցնելու համար նախատեսվում է նաև առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ: Նշվածը հաշվի առնելով՝ առաջարկում ենք վերանայել վերոնշյալ կարգավորումը: Միաժամանակ, անհրաժեշտ է հստակեցնել, թե աշխատանքային ստաժը ինչ ոլորտներում է պահանջվում:

2. ՀՀ ֆինանսների նախարարություն	01-06-2021 թվականի
	N 01/8-3/8673-2021 գրություն
Դիտողություններ և առաջարկություններ չկան:	
3. ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	31-05-2021 թվականի
	N 01/12.1/3265-2021 գրություն
Դիտողություններ և առաջարկություններ չկան:	
4. Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	02-06-2021 թվականի

		N ՄՆ/ԱՊ-1/23766-2021 գրություն
Դիտողություններ և առաջարկություններ չկան:		
5. ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա		02-06-2021 թվականի
		N 24-01/213 գրություն
<p>«Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հոկտեմբերի 3-ի N 935 որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի 3-րդ կետում ավելացնել 3.1 կետ՝ հետևյալ բովանդակությամբ.</p> <p>3.1. Խիստ անհրաժեշտության դեպքում կազմակերպության գիտական խորհրդի որոշմամբ տվյալ պաշտոնը բնորոշող չափանիշները կարող են փոփոխվել՝ կախված տվյալ կազմակերպության գիտական ուղղվածությունից:</p>	<p>Ընդունվել է մասամբ:</p> <p>3-րդ կետը լրացվել է 3.1 նոր կետով, որը կազմակերպություններին, ելնելով վերջիններիս մասնագիտական ուղղվածությունից, հնարավորություն է տալիս գիտական խորհրդի որոշմամբ սահմանել կադրերի որակավորման լրացուցիչ պահանջներ, որոնք կգործեն ի հավելումն սույն կարգով սահմանված չափանիշների:</p>	
6. ՀՀ վարչապետի աշխատակազմի իրավաբանական վարչություն		
Տաթևիկ Սարուխանյան		
<p>1. «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գիտական կադրերի որակավորման կարգը և գնահատման չափանիշները հաստատում է կառավարությունը: Նախագծի 1-ին կետի 2-րդ ենթակետով, սակայն, առաջարկվում է կառավարության լիազորությունը փոխանցել կազմակերպության գիտական խորհրդին: Առաջարկվող</p>	<p>Ընդունվել է:</p> <p>Նախագծից հանվել է 3.1 կետը:</p>	

<p>կարգավորումը հակասում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասին, համաձայն որի՝ նորմատիվ իրավական ակտերի ընդունման իրավասության փոխանցումն այլ մարմինների արգելվում է:</p> <p>2. Նախագծի 1-ին կետի 1-ին ենթակետով առաջարկվում է որոշման վերնագրում լրացնել «-Ն» տառը՝ սահմանելով իրավական ակտի բնույթը: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասը սպառնիչ կերպով թվարկում է նորմատիվ իրավական ակտում փոփոխություններ և լրացումներ կատարելու եղանակները: Նշված հոդվածի վերլուծությունից բխում է, որ իրավական ակտի բնույթը լրացնելը նախատեսված չէ որպես իրավական ակտում լրացում կատարելու եղանակ:</p>	<p>Ընդունվել է:</p> <p>Նախագծից հանվել է 1-ին կետի 1-ին ենթակետը:</p>
<p>7. ՀՀ վարչապետի աշխատակազմի սոցիալական հարցերի վարչություն Սեդրակ Սիմոնյան</p>	
<p>Նախագծի 3-րդ կետով լրացվող 3.1 կետը չի բխում «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջից, ըստ որի գիտական կադրերի որակավորման կարգը և գնահատման չափանիշները հաստատում է կառավարությունը: Կարծում ենք, որ գիտական կազմակերպության գիտական խորհրդին կարելի է վերապահել ընդամենը տվյալ կազմակերպության գիտական կադրերի ատեստավորման</p>	<p>Ընդունվել է: Նախագծից հանվել է 3.1 կետը:</p>

ընթացակարգային մեխանիզմ հաստատելու լիազորություն:
Գնահատման չափանիշներով կադրերի որակավորման լրացուցիչ
պահանջներ չեն կարող սահմանվել ոչ միայն գիտական
կազմակերպության, այլև նույնիսկ լիազոր մարմնի կողմից, քանի որ
օրենքն այդ իրավասությամբ օժտել է միայն կառավարությանը: